


«Ուրախ ժամանց»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

«Պտտվող անիվ» աստրակցիոնի
կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Կատարող՝
«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝
Վ. Թևոսյան



The image shows a handwritten signature in blue ink next to a circular blue stamp. The stamp contains the text: «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» «CONSECOARD» and the identification number 00111629. The outer ring of the stamp contains the text: «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» «CONSECOARD» and «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍՏՆԱԿԱՆ ՍՊԸ».

Երևան- 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	3
2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ	3
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	4
3.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները	4
3.2 Կլիմա	5
3.3. Օդային ավազան	9
3.4. Ջրային ռեսուրսներ	10
3.5. Հողային ռեսուրսներ	10
3.6. Սոցիալ-տնտեսական պայմանները	14
4. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	15
4.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները	15
4.2. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	20
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	20
5.1. Ռիսկերի գնահատում	20
5.2. Բնապահպանական և սոցիալական միջոցառումներ	21
5.3. Փոխհատուցում	23

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Ուրախ ծամանց» ՍՊ ընկերությունը, որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստան, 0037, Երևան Ազատության պող., 2 տարածք (Քանաքեռ-Զեյթուն վարչ. շրջան):

Ընկերությունն իրականացնում է «Հաղթանակ» զբոսայգու ժամանցի վայրերի սպասարկումը:

Ներկայում «Հաղթանակ» զբոսայգու տարածքում գործում է պտտվող անիվ, սակայն այն հնացած է, չի համապատասխանում ատրակցիոններին ներկայացվող ժամանակակից պահանջներին և «Ուրախ ծամանց» ՍՊ ընկերությունը նախատեսում է կառուցել և շահագործել նոր պտտվող անիվ:

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Սույն գործունեության ընթացքում հիմնական օրենսդրական պահանջները ներառված են.

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական

շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրբացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

3.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի “Հաղթանակ” զբոսայգու տարածքում:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Ընդհանուր առմամբ Երևանի տարածքում գեոմորֆոլոգիական պայմանները բավական բարդ են: Ռելիեֆի հիմնական տարրերն են Կոտայքի և Ջրվեժ-Ջրվեժի հրաբխային սարավանդների լանջերը, ինչպես նաև Գետառ գետի կիրճի զառիթափ լանջերը: Ըստ ձևաբանական առանձնահատկությունների տարածքը հանդիսանում է սարավանդի մի մասը՝ քաղաքի ամենաբարձր հատվածներից մեկն, որի մակերևույթը թեք աստիճանաձև է: Մարավանդը երեք կողմից ուղղաձիգ և մեծ թեքության լանջերով իջնում է դեպի հարևան իջվածքները:

Տարածքին բնորոշ են նաև առանձին հողմահարման էրոզիոն լանջերը, տափարակները, հարթ տարածքները, ողողահունները, ձորակները:

Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային չստորաբաժանված համախմբերի առաջացումները. ներկայացված բազալտներով, անդեզիտա-բազալտներով, դոլերիտներով, Հրազդանի գետի բարձր վերողողահունային դարավանդի առաջացումները՝ ավազ, կավավազ, ճալաքարա-կոպճային, ճալաքարա-գլաքարային գրունտներ, ինչպես նաև ժամանակակից, ալյուվիա-պրոլյուվիալ, դելյուվիա-պրոլյուվիալ և էլյուվիա-դելյուվիալ առաջացումները՝ ավազներ, կավային և խոշորաբեկորային գրունտներ:

Ժամանակակից ռեիլեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ներկայացվող տեղամասում գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ II-6.02-2006 <<Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր>> նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից շրջանը և տեղամասը տեղադրված է Երևանի վերադրված միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Շրջանը համարվում է հայկական բարձրավանդակի ամենասեյսմակտիվ գոտիներից մեկը:

3.2 Կլիմա

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով: Գործունեության ենթակա տարածքը գտնվում է <<տաք>> կլիմայական գոտում: <<Տաք>> գոտու կլիմայական բնութագրերն են՝ ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21 °C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև մինուս 5 °C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–120C: Բացառձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30 0C, բացառձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 42 0C:

Տարածքի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ – մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս – սեպտեմբեր ամիսները խիստ

չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 286 մինչև 353 մմ:

Ամռանը օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49% – 53%, ձմռանը՝ 73% – 76%, գարնանը՝ 57% – 61% և աշնանը՝ 51% – 70%:

Դիտարկվող տարածքին ամենամոտը տեղակայված է Էրեբունի օդերևութաբանական կայանը, որի տվյալներով քամու փչելու ուղղությունը տատանվում է և գերակա ուղղություն չկա: Հյուսիս- արևելյան և հարավ-արևելյան քամիները ավելի շատ են ապրիլին, հարավ-արևմտյան քամիները՝ հունիսին, հյուսիս-արևելյան քամիները՝ հուլիսին և հյուսիս արևելյանը՝ հուլիսին, հարավ արևելյան քամիները՝ հոկտեմբերին:

Դիտարկվող տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Գերակշռում են 2.1մ/վրկ արագության հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան ուղղության քամիները, 20 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 23մ/վրկ ուժգնության քամիներ: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%:

Ձյան ծածկոցի հաստությունը հասնում է 50սմ, ճնշումը՝ 70կգու/մ²: Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70սմ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ մոտակա՝ Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 3.2 Օդի հարաբերական խոնավությունը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արաբկիր	1113	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47		

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

1	2	3	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								12	13	14	15	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների		
			4	5	6	7	8	9	10	11					20	50	100
Արաբկիր	1113	Հունվար	13	29	18	7	14	20	6	3	45	0.9	2.0	30	20	23	25
1.9			1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9								
Ապրիլ		15	29	6	8	12	17	9	4	15	2.1						
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5								
Հուլիս		28	32	3	3	8	16	7	3	13	3.4						
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6								
Հոկտեմբեր		17	37	6	5	10	16	6	3	19	1.8						
		2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0								

3.3. Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Ըստ ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում առկա տեղեկատվության (վերջին տարեկան ամփոփաթիր՝ 2019 թվականի համար) Երևան Քաղաքի №1, №2, №7, №8, №18 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով կատարվել են մթնոլորտային օդի դիտարկումներ: Վերցվել է օդի 6975 փորձանմուշ, որոնցում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով: 2019թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտի աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ) 1.54 է (փոշի՝ 0.85, ծծմբի երկօքսիդ՝ 0.35, ազոտի երկօքսիդ՝ 0.28, գետնամերձ օզոն՝ 0.06): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու՝ աճման տենդենց (աղյուսակ 3.1.2): Պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են քաղաքի 42 դիտակետերում, վերցվել է օդի 4098 փորձանմուշ: Երևան քաղաքի մթնոլորտում նյութերի տարեկան միջին կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

Աղյուսակ 3.4. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները

№	Որոշվող միացություն	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՄԹԿ միջին օրական, մգ/մ ³
1	Ծծմբի երկօքսիդ	0.017	0.05
2	Ազոտի երկօքսիդ	0.015	0.04
3	Փոշի	0.127	0.15
4	Գետնամերձ օզոն	0.005	0.03

3.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է ՊՈԱԿ-ի կողմից:

Երևանի տարածքում հիմնական ջրային ռեսուրս է հանդիսանում Հրազդան գետը իր Գետառ վտակով և Երևանյան լիճը:

Ըստ Էկոմոնիթորինգի պաշտոնական կայքում առկա վերջին տեղեկատվության, Հրազդան գետի ջրի որակը Արզնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում 2020 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է նույնպես «վատ» (5-րդ դաս):

Նախատեսվող գործունեության տարածքի ուղիղ գծքվ հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից կազմում է 2.5 կմ:

3.5. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Դիտարկվող տարածքում հողերի ձևավորման պրոցեսն ընթանում է հրաբխային ապարների՝ բազալտների, տուֆերի, հողմահարման նյութերի վրա: Նրանց վրա

ձևավորվում են Բաց գորշագույն հողեր: Հողերը հիմնականում ունեն կավավազային կամ ավազակավային մեխանիկական կազմ:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:


Չոր կլիման և աղքատ բուսական ծածկը պայմանավորում են հողային պրոֆիլի բաժանվածությունը հորիզոնների և օրգանական նյութերով թույլ հագեցվածությունը: Նույնիսկ հողի ամենավերին հորիզոններում թույլ հիմնային ռեակցիայի պայմաններում հումուսի քանակը այդպիսի հողերում 1 %-ից չի անցնում:

Ամռանը հողի մակերևույթը սովորաբար տաքանում է մինչև 50°C, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 54°C: Ձմռանը սառչում է միջին հաշվով 2-3 սմ խորությամբ, առանձին տարիներին կարող է սառել մինչև 35սմ: Ամռանը հողն ուժեղ չորանում է և ճաքճքում: Այսպիսի պայմաններում բույսերի աճեցնելն առանց արհեստական ոռոգման գործնականորեն անհնար է:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի, քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության, քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Սակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ:



Նկար 1. Պտտվող անիվի տեղադիրքը



Նկար 2. Տեղանքի իրադրային սխեմա

3.6. Սոցիալ-տնտեսական պայմանները

Ներկայացվող գործունեության ազդակիր համայնք է հանդիսանում Երևան քաղաքը: Գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջանների հետ:

Տարածքը՝ 760.01 հա

Բնակչությունը՝ 74 400 մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Երևանի¹ տարածքը կազմում է 223 քվմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից²:

Աղյուսակ 3.5. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝ վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը	1 073.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.8 %

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

¹ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք

² www.armstat.am

Երևանում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջանների հետ:

Տարածքը՝ 760.01 հա

Բնակչությունը՝ 74 400 մարդ:

4. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Նախատեսվող հողակտորը գտնվում է “Հաղթանակ” զբոսայգու տարածքում:

Անիվը կառուցվելու է առկա չգործող այլ կարուսելի տեղը: Մինչ աշխատանքների սկիզբը նախատեսվում է ապամոնտաժել և տարածքից դուրս բերել այդ կառուցելի մասերը:

Նոր անիվի տեղափոխումը կկատարվի մաս մաս: Անիվի բաղկացուցիչ մասերը առանձին տրանսպորտային միջոցներով կտեղափոխվեն տարածք, որտղ կհավաքվեն նախապատրաստված հիմքերի վրա:

Անիվի կոնստրուկցիան նախատեսված է մետաղական նյութերից: Անիվի համար նախատեսված հարթակը կունենա ուղևորների մուտքի և ելքի հատվածներ: Հարթակի պարապետը նախատեսված է երեսպատել տրավերտին տեսակի քարով, իսկ հատակը սալապատել: Հարթակի նիշը՝ 1141.6 մ:

Տարածքի սահմանային աջ մասում գործում է սրճարանը, ձախ մասում՝ զբոսանքների ծառուղի:

Անիվի առանցքային երկարությունը և խորությունը կլինի 20մ, իսկ տրամագիծը նախատեսված է 49.975 մ:

Տարածքում նախատեսված է նաև փոքրիկ տնակ էլեկտրակառավարման սարքավորումների համար:

Էլեկտրական սարքավորումների միացումը կիրականացվի տեղում առկա ենթակառուցվածքներին:

Անմիջապես կառուսելի, հարթակի և կառավարման տնակի տարածքում ծառեր չկան:

Ատրակցիոնի նախագծային ցուցանիշները հետևյալն են.


- նախագծային հողամասի ընդհանուր մակերեսը՝ 736.72 ք.մ.
- կառուցապատման և սավաճքների մակերեսը՝ 246.95 ք.մ.
- կանաչապատման ենթակա մակերես՝ 489.77 ք.մ.
- անիվի բարձրությունը գրոյական նիշից՝ 49.975 մ
- կառուսելի բարձրությունը գրոյական նիշից մինչև պտտվող առանցք՝ 26.525 մ:

Նոր անիվի տեղադրումից և գործարկումից հետո ներկայում գործող պտտվող անիվը նույնպես կապամոնտաժվի:

Աշխատանքների իրականացման հաշվարկային տևողությունը կազմում է 20 ամիս:


Ստորև բերված են նախատեսվող անիվի հորիզոնական և ուղղահայաց պատկերները, ինչպես նաև հորիզոնական կտրվածքը:

ՃԱԿԱՏ Ե-Ա ԱՌԱՆՑՔՆԵՐ Մ 1:200



Նկար 3. Ճակատ

ՃԱԿԱՏ 4-1 ԱՌԱՆՑՔՆԵՐ Մ 1:200



Նկար 4. Առանցքներ

4.2. Նյութերի և բնատեսուրսների օգտագործում

Նախատեսվող գործունեության ընթացքում օգտագործվելու են մետաղական կոնստրուկցիաներ, էլեկտրական շարժիչներ, բետոնային խառնուրդ, կառավարման վահանակ և այլն:

Ջրի և նյութերի ստույգ քանակները կհաշվարկվեն աշխատանքային նախագծի շրջանակներում: Ըստ նախնական գնահատման ջրցանի համար ջրի պահանջը կկազմի մոտավորապես 1 մ³/օրական, շինարարության ամբողջ ընթացքում /տաք և առանց տեղումների օրեր/՝ 140 մ³: Ջրցանի համար ջուրը կվերցվի տարածքում գործող ոռոգման խողովակաշարից:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

5.1. Ռիսկերի գնահատում

«Որախ ժամանց» ՍՊԸ կողմից ներկայացվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- աշխատանքային տեղամասում հողածածկի մասնակի վնասում,
- շինարարական աշխատանքների ընթացքում փոշու արտանետումների առաջացում,
- շինարարության ընթացքում օգտագործվող շինարարական և տրանսպորտային միջոցների շարժիչներում վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,
- շինարարության ընթացքում օգտագործվող շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման աչդյունքում աղմուկի մակարդակի բարձրացում,
- ապամոնտաժման արդյունքում առաջացած կոնստրուկցիաների և սարքերի թափոններ,
- շինարարական աղբ:

Նախատեսվող աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են հետևյալ բնապահպանական և սոցիալական միջոցառումները:

5.2. Բնապահպանական և սոցիալական միջոցառումներ

5.2.1. Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- սորուն նյութերի տեղափոխումը իրականացվում է պարկերով
- սորուն նյութերի պահեստը փակ շինության մեջ է,
- աշխատանքային հրապարակը պարբերաբար կջրցանվի:

5.2.2. Ջրային ռեսուրսների պահպանության նպատակով նախատեսված են.

- Ջրի ծախսը նվազեցնելու նպատակով տեղում բետոնային խառնուրդ չի պատրաստվելու, այն գնվելու է և տեղափվելու է հրապարակ պատրաստի վիճակում համապատասխան բետոնատար մեքենաներով:
- Ջրցանի ծավալները այնպես են հաշվարկվելու, որ չառաջանան ջրային հոսքեր:

5.2.3. Հողածածկ

Անիվի հիմքերի փորման ընթացքում կհանվի գրունտի որոշ քանակ, որն ամբողջությամբ կօգտագործվի որպես ետլիցք, կամ զբոսայգու այլ տարածքների բարեկարգման նպատակով: Քանի որ աշխատանքային տեղամասում չկա բերրի հողաշերտ, վնաս չի նախատեսվում, համապատասխանաբար բերրի հողի պահպանության միջոցառումների կարիք չկա:

5.2.4. Թափոնների կառավարման պլանով նախատեսված են.

- Ուսումնասիրել ապամոնտաժման արդյունքում առաջացող մետաղական կոնստրուկցիաների, լարերի էլեկտրական շարժիչների վիճակը,
- առանձնացնել պիտանի մասերը և օգտագործել դրանք զբոսայգում գործող ատրակցիոնների նորոգման նպատակով
- մնացածը տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Ընդամենը աշխատանքների արդյունքում կառաջանա շինարարական աղբ՝ 20 - 30 մ3, որը համաձայն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25.12.2006թ. N 430-Ն հրամանի համապատասխանում է «Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներ» տեսակին, դասիչ՝ 39901200 01 00 4, վտանգավորության դաս՝ IV:

Շինարարական թափոնների կառավարումը կիրականացվի ՀՀ կառավարության № 30 արձանագրային որոշման համաձայն, կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայրում:

5.2.5. Կանաչապատում

Նոր անիվի համար նախատեսված տարածքում առկա են մի քանի ծառեր: Սակայն աշխատանքները այնպես են պլանավորվել, որ ոչ մի ծառ չի կտրվի: Միայն երկու ծառ կէտվեն՝ անիվի տեղադրման կողմից:

Բոլոր շինարարական աշխատանքներից հետո նախատեսված է մաքրել տարածքները և ազատ տարաշքները կանաչապատել զբոսայգու տարածքում առկա խոտածածկով:

5.2.6. Աշխատանքների անվտանգ կազմակերպում

Քանի որ ներկայացված աշխատանքները իրականացվելու են գործող զբոսայգում, նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք թույլ կտան ապահովել զբոսայգու այցելուների անվտանգությունը: Դրանցից հիմնականներն են.

- հիմնական կոնստրուկցիաների տեղափոխումը կիրականացվի վաղ առավոտյան ժամերին
- ամբողջ շինարարակը կցանկապատվի
- շինարարակի շուրջը կտեղադրվեն զգուշացնող պաստառներ
- Տոն օրերին և քաղաքապետարանի թույլտվությամբ կազմակերպվող հանրային միջոցառումների ժամանակ աշխատանքները կդադարեցվեն, տարածքը կմաքրվի և կբարեկարգվի:

5.2.7. Հրդեհային անվտանգություն

Հրդեհային անվտանգության համար կարևորվում են հետևյալ միջոցառումները Շինարարական հրապարակում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինեն հակահրդեհային ավտոմատ սարքերով, որոնք վերահսկում են հրդեհի յուրաքանչյուր բռնկում:

- Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով:
- Պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնում տեսչական ստուգում՝ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս:

- Հրդեհի ժամանակ կհոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, կմիացվի հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

5.2.6 Սոցիալական խնդիրներ

Նախատեսվող շինարարական աշխատանքների համար կպահանջվեն նոր աշխատանքային ռեսուրսներ:

Աշխատակիցների կենցաղային պայմանները կապահովվեն տարածքում առկա վարչական շենքի հնարավորությունների շրջանակներում՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15 հրամանի պահանջների: Սպասարկվող անձնակազմը կապահովվի անհրաժեշտ արտահագուստով, անձնական պաշտպանիչ միջոցներով:

5.3. Փոխհատուցում

Նախատեսվող բնապահպանական միջոցառումների նպատակն է կանխարգելել, կամ նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի և սոցիալական միջավայրի վրա:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ներկայացվող գործունեության նպատակն է կազմակերպել բնակչության անվտանգ ժամանցը:

Ստորև բերված են նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) պատճենը և որոշ տեղամասերի լուսապատկերները:

